



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ո Ւ Մ

ՎԵՆԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ԳՐՎԱԾ ԿՈՆԴԱԿԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Վենափառի նշանակալից կոնդակը :

Այս օրերս մեր ձեռքը անցավ «էշմիածին» ամսաթիրի 1949 հունվար-փետրվար միացյալ համարը, որու առաջնորդողն է Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակը, որով Վեհափառ անդրադարձ է գարձյալ Ամերիկահայ թեմի այն հատվածին, որ «զուգանալով հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը և ընդհանուր բարոյական նկարագիրը մեծապես արատավորող ողբերգական դեպքերի, կենտրոնախույս տրամադրությունների և անհանդուրժելի նախասիրությունների, տարիներ շարունակել է մեղանչել և յարդ մեղանչում է Հայաստանյաց Ազգային-Առաքելական Սուրբ Եկեղեցու կենսատու միասնականության դիմ»:

Վեհափառը կնշե որ «Հայ ժողովրդի ազգային-Եկեղեցական միասնությունը բարոյական մեծագույն գանձն է, և հոգևոր երաշխիքը Սփյուռքի ազգահավաքման ու ազգապահանության, որի տարաբնակ հայագունը զուրկ է և սիրեցյալ Հայունիքի կենսատու արևից, հողից ու ջրից, և ազգային գերիշխան Պետության ոգեշնչող մոգական ուժից», հետևաբար միասնականության բացակայությունը կնկատե խոշոր ազիտ մը, որու վերացման համար անգամ մալ հայրական խոսքը կուղղե բաժանյալ հատվածին սրտառուշ տողերով։

Ուշագրավ է և այն նշումը Վեհափառին, որ «Մրագես նախանձախնդիր հայ ժողովրդի ազգային-կրոնական համերաշխ միասնու-

թյան վեհագույն գաղափարի անվիար պաշտպանության և հավատարիմ Հայ Եկեղեցու լայնախորհության, Համբերատարության և ներողամտության սրբազն ավանդներին, Մայր Աթոռու տարիներ շարունակ հրաժարվել է կանոնական վճռահատումներից, նախընտրելով Հայրապետական հորդորն ու հոգվական խրատը»։

Համազգային միասնականությունը հայության ներքին ուժի աղբյուրը դավանող Վեհափառը իր այս կոնդակով կրազմա դարձյալ Հոգեմին որ անմիաբանության աղետին գիտակցին բաժնվողներու զեկավարները ու վերջ տան անմիաբանության, խաղաղություն տալու համար «ալեհեր Հայրապետի հոգուն, որ խոռվաճույզ է այսօր ի տես իր զավակաց պառակտման, անմիաբանության»։

* * *

Արդարեւ, սրտագրավ է Վեհափառին կոնդակը, ամբողջությամբ շաղախված քրիստոնեական սիրով, Հայաստանյաց Առաքելական Եկեղեցիի միասնականության չերմ ոփով և Հայրենասիրական վառ զգացմունքներով։ Վեհին բոլոր կոնդակներն այսպիսի աստվածային ոգի մը կրած են իրենց մեց։ Հայրական հորդորները՝ սիրո, խաղաղության և միասնականության, շատ ուժեղ եղած են, քարերն իսկ կակուցնող, ապառաժներն իսկ շարժող, և սակայն անզոր հանդիսացած են շարժել բաժանյալ հատվածի դեկավարության սիրու բրածոյացած։

Երբ այս է գժեախտ և անհերքելի իրողությունը, դժվար է հավատալ թե այսօր անոնք

1. Հողվածը բերում ենք կրօնառությունը։ — ԽՄԲ.

պիտի մերկանան քինախնդիր, հատվածամուլ և փառատեն ոգիեն և պիտի չսեն վեհին ազգային համերաշխության և եղբայրության սիրո կոչը: Դժվար է կըսենք անոր համար, որ բաժանյալ հատվածի ղեկավարներու թշնամությունը դեպի մեր ազատ Հայրենիքը՝ էջմիածնինը և անոր հավատարիմ արտասահմանյան եկեղեցականությունը ու միան տկարացած չէ, այլև վերջերս ավելի ուժեղացած, ծավալած է և անպատկառորեն և անխիղնորեն...

Այսպիսի անմարդկային վերաբերում կա և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին հանդեպ այս օրերուն: Եվ այս՝ այն աստվածան անխղճորեն, որ «Սիրո» ամսագիրը ձևուշ ախտանշաններ» խորագրով խմբագրականին մեջ կանգնադառնա հետևյալ տողերով, զայրույթը անդմած:

«...Ինչպես որագիւ, օրինակ, արարքը անոնց՝ որոնք խմբագրական տիտուր հաշիվներով խիղճ չեն ըներ վարկարեկելու մեր եկեղեցին նվիրապետությունը խորհրդանշող և իրենց ամբասիր կյանքով և գործով հանրության մտքին ու հոգիին մեջ նվիրականացած անձնավորություններ, ի հեճուկս մեր աղույթին խղճմտանքին և հաշու օտարներուա:

«Այդպիսիներուն խոսքը, խավարին մեջին լսված հայուսներ լոկ, արժանի պիտք չէ նկատվին անշուշտ որմէ պատասխանի, ինչպես մորացած ճահիճների ցայտած կեղտեր,

որոնց՝ մարդ պիտի պժգար դառնալ և քարնետել արձակված ցեխին կողմը»:

Այս տողերը կուռ և զուսպ գրված Կիլիկիո Վեհափառին նկատմամբ եղած անպատճառ աթուայտությանց և վերագրումներով ի պատասխան, չե՞ն փաստեր միթե մեր մտածումը թե՝ կիրքեր կուրացած այդ խմբակը, երբ տակավալին բռնմցքը կրաքրացնել մեր ազգային ղեմքերուն և հաստատությանց դիմ, միասնականության ոգին ապրել շատ հեռու է, և հետեւաբար ան պիտի շարունակել մնալ բաժանված և թշնամական դիրքի մեջ ընդուն մեր ազատ Հայաստանին և անոր հավատարիմ հայրենասեր կղերականության:

Ինչքան պիտի բաղձայինք, որ Վեհափառի հայրական հորդորը արձականք դաներ դունե այս անգամ բաժանյալ հատվածի ղեկավարության մոտ և անոնք բնդառաչեին մաքուր սրտով և հոգիով իրականացնելու միասնակությունը...

Իշմիածնի արժանապուր Գահակալի, մեր օրերու Ղևոնդ Օբեցի այս ազաղակը, հայրական կոչը, կրկնենք, իցի՞վ թե այս անգամ անարձագանք չմնա, մեր Ազգին և եկեղեցին արատ բերող պառակտումը վերջ գտնեն ի շահ մեր ազատ Հայրենիքին և Հայ Առաքելական Եկեղեցին:

(«Երիտասարդ Հայաստան», 20 սեպտ. 1949 թ.)

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍԻ ԹԱՆԴԱՐԱՎՆԵՆ

Բուքրեշահայ ծանոթ արվեստասեր Գրիգոր Զամբագյան, երեք տարի առաջ, Սովետ Հայաստանի Գեղարվեստի թանգարանին ըրած իր առաջին նվիրատվություններ վերջ, որ կրադիանար երեք նկարներ, ներկայիս որոշած է՝ Հայկ. Դեմ. Կոմիտեի միջոցով՝ Սովետ Հայաստանի թանգարանին նվիրել, ուրիշ երեք նկարներ՝ Փրանսացի ծանոթ նկարիչներու գործերնեն:

Հետևյալներն են այդ նկարներ.

1. «Կրկեսը», — $1,30 \times 1,65$ մ. մեծությամբ, նկար՝ Maurice Brianchon -ի, մինչ Փրանսացի աշխառու երիտասարդ արվեստագիտություններն:

2. «Ծուկա Հայուարապատի մեջ», — $0,60 \times 0,50$ մ. մեծությամբ, գործ՝ Albert Besnerd -ի, նշանավոր հարդարիչ՝ Փարիզի Théâtre français -ի առաստաղին, հայտնի գիմանակարիչ և արևելագիտ:

3. «Կապուտով կինը Մոնմարտրի հրապարակին անցած ատեն», — պատճեն՝ Louis Anquetin -ի, — $0,60 \times 0,65$ մ. մեծությամբ:

Այս նկարներն առաջինը՝ «Կրկեսը» ցուցադրած է 1928-ին Տուլլըրիի ցուցահանդեսին մեջ և արժանացած՝ մեծ հիացմոնքի:

(«Ենր կյանք», 30 հունիսի 1950 թ.)